ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 1, 1958 Общественные науки

Հ. Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (ՀԼԿԵՄԸ ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐՈՒՄ)

Պարտիայի 16-րդ կոնֆերանսում (1929 թ. ապրիլ) հաստատված տնտեսական շինարարության հնգամյա պլանը, որը բխում էր մեր երկրում սոցիալիզմի կառուցման լենինյան ուսմունքից, հանդիսացավ պարտիայի ծրագիրը՝ երկրի տնտեսական ու կուլտուրական հետամնացության լիկվիդացման ճանապարհին։ Այն արտացոլում էր սոցիալիստական հասարակության տնտեսական հիմքի կառուցման կոնկրետ նախադրյալները՝ ամբողջ հասակով մեկ դնելով երկրի սոցիալիստական ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման խնդիրները։ Հնգամյակի ընթացքում ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումները կազմելու էին 64,6 միլիարդ ռուբլի։ Նախատեսվում էր կառուցել 1500 արդյունաբերական ձեռնարկություն, որոնց շնորհիվ սոցիալիստական արդյունաբերությունը մոտ երեք անգամ պետք է գերազանցեր նախապատերազմյան մակարդակը։

ՍՍՌՄ-ի առաջին հնգամյա պլանով զարգացման լայն հեռանկարներ էին բացվում նաև նրա բաղկացուցիչ մասը կազմող Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության համար։ Հայաստանի Կոմպարտիայի 6-րդ համագումարում (1929 թ. հունվար) քննարկվում և Սովետների 6-րդ համագումարում (1929 թ. ապրիլ) հաստատվում է ռեսպուբլիկայի հնգամյա պլանը, որով ժողովրդական տնտեսության մեջ նախատեսվում էր 276,8 միլիոն ռուբլու կապիտալ ներդրում, որից արդյունաբերության մեջ (էլեկտրիֆիկացիայի և տրանսպորտի հետ միասին) 117,6 միլիոն ռուբլի, իսկ գյուղատնտեսության և ջրային տնտեսության մեջ՝ 81,5 միլիոն ռուբլի[1]։

Այդ խնդիրների հաջող լուծման համար անհրաժեշտ էր պարտիայի կամքի միասնություն և երկաթյա կարգապահություն, աշխատավոր լայն զանգվածների սերտ համախմբվածություն՝ հարազատ պարտիայի շուրջը։

Այդ վեհ խնդիրների իրագործման կապակցությամբ օրեցօր բարձրանում էր երիտասարդ սերնդի դերը, աճում նրա մասնակցությունը երկրի սոցիալիստական շինարարության գործում։ Կոմերիտմիությունը դառնում է ոչ միայն ռևոլյուցիոն էնտուզիազմի անսպառ աղբյուր, այլև մի կազմակերպություն, որը, հանդիսանալով Կոմունիստական պարտիայի հավատարիմ օգնականը, պրակտիկայում հաջողությամբ օժանդակում էր պարտիային՝ սոցիալիստական շինարարության տնտեսական, քաղաքական, կուլտուրական խնդիրների լուծման գործում։

Սոցիալիստական շինարարության տվյալ էտապում կոմերիտմիության գլխավոր խնդիրն էր՝ ուժեղացնել օգնությունը Կոմունիստական պարտիային,

---

[1] Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով. Երևան, 1935, էջ 18։

նրա հետ և նրա ղեկավարությամբ ծավալել սոցիալիստական արդյունաբերության անշեղ զարգացումը, ռացիոնալիզացիայի ենթարկել արտադրությունը, կառուցել նոր ֆաբրիկաներ ու գործարաններ, վերակառուցել գյուղատնտեսությունը, բարելավել պետական ապարատը, վերացնել անգրագիտությունը, պայքարել գործալքության և թափթփվածության դեմ։

Այսօրինակ ծրագրային խնդիրներով ՀամԼԿԵՄ-ը և նրա մարտական ջոկատ Հայաստանի լենինյան կոմերիտմիությունը թևակոխեցին 1929 թ. ՍՍՌՄ-ի ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյակի առաջին տարին։

Արտադրության և աշխատանքի ռացիոնալիզացիայի ու բարելավման գործում բանվոր դասակարգի մասնակցության հիմնական ձևերից մեկը արտադրական խորհրդակցություններն էին, որտեղ պարտիական կազմակերպությունների ղեկավարությամբ ակտիվ դեր էին կատարում կոմերիտականներն ու երիտասարդ բանվորները։ Արտադրական խորհրդակցությունների գործունեության հիման վրա մեր երկրի արդյունաբերական խոշոր կենտրոններում (Ուրալ, Մոսկվա, Կուզբաս, Դոնբաս, Լենինգրադ), ստեղծվում են առաջին կոմերիտական, երիտասարդական բրիգադները, որոնք սոցիալիստական ինդուստրիայի խնդիրների իրագործման ասպարեզում հանդես են բերում հերոսության և անձնազոհության աննախընթաց օրինակներ։ Կոմերիտականների շրջանում ավելի լայնորեն է ծավալվում նախաձեռնությունը։ Այն կիրառում են ստանում արտադրական կոնկուրսները, խորհրդակցությունները, մրցականչերը։

Առաջին հարվածային բրիգադների հաջողությունները, նրանց փորձը օրինակ են դառնում երկրի արդյունաբերական շատ ձեռնարկությունների երիտասարդության համար։ Կոմերիտական երիտասարդական բրիգադները, կոմերիտական ցեխերը ավելի մեծ չափով են սկսում կազմակերպվել 1929 թ. հունվարից։ Այդպիսի միավորներ կազմակերպելու ուղղությամբ առաջին քայլերն են արվում Հայաստանի արտադրական ձեռնարկություններում։ Այդ ժամանակ արդյունաբերության և շինարարության մեջ աշխատում էին 7041 երիտասարդ բանվորներ[2], որոնցից 4216-ը կոմերիտմիության անդամներ էին[3]։ Կոմերիտական կազմակերպության նախաձեռնությամբ Ալավերդու Մեխանիկական արհեստանոցը, որտեղ աշխատող 49 բանվորներից 42-ը կոմերիտականներ էին, 1929 թ. հունվարի սկզբներին վեր է ածվում «կոմերիտական մեխանիկական արհեստանոցի» և մրցման է հրավիրում Զափանի երիտասարդ պղնձագործներին, Լենինականի տեքստիլ կոմբինատի, դեպոյի, մեխանիկական գործարանի կոմերիտական կազմակերպություններին՝ կոմերիտական ցեխեր և բրիգադներ ստեղծելու համար։ Կարճ ժամանակամիջոցում, կոմերիտականների եռանդուն աշխատանքի շնորհիվ, վերասարքավորվում է արհեստանոցը, բարձրանում աշխատանքի արտադրողականությունը, վերացվում խոտան արտադրանքը և պարապուրդները[4]։

---

[1] Տե՛ս ՀամԼԿԵՄ 8-րդ համագումարի որոշումներն ու բանաձևերը, 1929։

[2] Տե՛ս ՀԼԿԵՄ կենտկոմի 1-ին պլենումի նյութերը («Վանգարդ», 1929, փետրվարի 8, № 11)։

[3] Տե՛ս Комсомол Закавказья в цифрах, Тифлис, 1931, стр. 5.

[4] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, գ. 113, թ. 32, 1929։

Երևանի Փայտամշակման ֆաբրիկայի ԼԿԵՄ կազմակերպության որոշմամբ ատաղձագործական ցեխը վեր է ածվում հատուկ կոմերիտական ցեխի։ Անցնելով հարվածային աշխատանքի, «կոմերիտական ցեխը իր աշխատանքով օրինակ է հանդիսանում գործարանի բանվորության համար։ Նրանց փորձի հիման վրա համոզվում են, թե ինչպես կոմերիտականները գործը համարում են իրենց սեփականությունը, ինչպես ջանք չեն խնայում արտադրությունը բարձրացնելու համար»[1]։

Լենինականի տեքստիլ կոմբինատի երիտասարդ բանվորները մրցման պայմանագիր են կնքում Իվանովո-Վոզնեսենսկի տեքստիլագործների հետ։

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը մեծ ուշադրություն են դարձնում կոմերիտմիության այդ նախաձեռնությանը և նրան ցույց են տալիս ամենօրյա օգնություն և աջակցություն։ ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության Գերագույն Խորհրդի Նախագահ Վ. Վ. Կույբիշևի ստորագրությամբ 1929 թ. հունվարի 16-ին հրապարակվում է հրաման՝ հարվածային բրիգադների աշխատանքներին լայն օժանդակություն ցույց տալու մասին[2]։

Կոմերիտականների և երիտասարդների շրջանում հարվածային բրիգադների կազմակերպումը և ծավալումը կոմերիտմիության արտադրական-մասսայական աշխատանքի նոր, ավելի բարձր էտապ էր։ Գործարանների և ֆաբրիկաների տեխնիկատնտեսական հետամնացությունը ամեն կերպ հաղթահարելու երիտասարդության մասսայական ձգտումից ծնվեց սոցիալիստական մրցությունը, որի գաղափարը պատկանում է Կոմունիստական պարտիայի մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինին, իսկ կյանքի կոչելու նախաձեռնությունը՝ լենինյան կոմերիտմիությանը։

1929 թ. հունվարի 17-ին «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթը կոմերիտական կազմակերպություններին կոչ է անում է՛լ ավելի լայնորեն ծավալել հարվածային բրիգադների շարժումը և մրցությունը ՀամԼԿԵՄ ֆաբրիկա-գործարանային բջիջների միջև՝ արտադրանքի ինքնարժեքի իջեցման, աշխատանքի արտադրողականության բարձրացման համար[3]։

Արտադրական վերելքի և սոցիալիստական մրցության սկզբնավորման պայմաններում, Լենինի մահվան 5-րդ տարեդարձի կապակցությամբ 1929 թ. հունվարի 20-ին «Պրավդա» թերթը առաջին անգամ տպագրում է Վ. Ի. Լենինի 1918 թ. հունվարին գրած «Ինչպես կազմակերպել մրցությունը» նշանավոր հոդվածը։ Այդ հոդվածում Վլադիմիր Իլյիչը բացահայտելով մրցության էությունը որպես սովետական հասարակարգի օրինաչափություն, կանխատեսում էր, որ մասսաների աշխատանքային մրցությունը պետք է հանդիսանա սոցիալիզմի կառուցման հզոր դործոն։

Լենինի հոդվածի հրապարակումը սոցիալիստական մրցությանը տվեց ավելի մասսայական բնույթ, նպաստեց այն բանին, որ երիտասարդության ակտիվությունը վերածվի համընդհանուր պայքարի՝ առաջին հնգամյա պլանի կատարման համար։ Կոմունիստական պարտիան, առաջնորդվելով Լենինի ցուցումներով, կազմակերպեց ու ոգեշնչեց սոցիալիստական մրցությունը, լայ-

---

[1] «Ավանգարդ», 1929, փետրվարի 22։

[2] Политический и трудовой подъём рабочего класса СССР (1928—1929), Сборник документов, Москва, 1956, документ № 75, стр. 127.

[3] Տե՛ս „Комсомольская правда", 1929, январь, № 14.

նորեն ծավալեց մասսաների անօրինակ ստեղծագործական նախաձեռնությունը։ Սոցիալիստական մրցման լենինյան գաղափարը համակեց կոմերիտական կազմակերպություններին, Սովետական Միության ողջ աշխատավոր երիտասարդությանը։

Սոցիալիստական արդյունաբերության թափը ուժեղացնելու, աշխատանքի արտադրողականությունը 20 տոկոսով բարձրացնելու, արտադրանքի ինքնարժեքը 7 տոկոսով իջեցնելու և որակը բարելավելու համար պարտիայի և կառավարության դիրեկտիվները կատարելու նպատակով կոմերիտմիությունը կազմակերպում է համամիութենական սոցիալիստական մրցություն։ Այս կապակցությամբ նախ «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթը (1929 թ. հունվարի 26) և ապա ՀամԼԿԵՄ Կենտկոմը (1929 թ. մարտի 31) հատուկ կոչով դիմում են Սովետական Միության կոմերիտականներին և երիտասարդությանը[1]։

Սոցիալիստական մրցության գաղափարը, երկրի արդյունաբերական կենտրոնների առաջավոր ձեռնարկությունների փորձը լայն տարածում են գտնում նաև Հայաստանի կոմերիտականների և երիտասարդների շրջանում։

Հայաստանի ԼԿԵՄ Կենտկոմը և «Ավանգարդ» թերթը, հետևելով ՀամԼԿԵՄ Կենտկոմի և «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթի օրինակին, Համամիութենական մրցականչին զուգահեռ իրենց հերթին հայտարարում են Համահայաստանյան մրցականչ՝ ռեսպուբլիկայի գավառային կազմակերպությունների միջև։ ՀԼԿԵՄ Կենտկոմը 1929 թ. հունվարի 26-ի որոշմամբ[2] կոնկրետ առաջադրանք է տալիս Լենինականի Տեքստիլ կոմբինատի, դեպոյի, Ալավերդու, Ղափանի, Երևանի «Արարատ», Մեխանիկական, Զեթ-օճառ և Փայտամշակման գործարանների կոմերիտական կազմակերպություններին՝ նրանց ուշադրությունը հրավիրելով աշխատանքի արտադրողականության բարձրացման, ինքնարժեքի իջեցման, որակի բարելավման, ինչպես նաև պարապուրդների, թափթփվածության, անկարգապահության դեմ պայքարի ուժեղացման վրա[3]։

ՀԼԿԵՄ Կենտկոմի բյուրոյի որոշմամբ մարտի 25-ից մինչև ապրիլի 25-ը ռեսպուբլիկայում անց է կացվում Համամիութենական մրցման նախապատրաստման միամսյակ, արտադրական ստուգատեսներ և կոնկուրսներ։ ՀԼԿԵՄ Երևանի, Լենինականի, Լոռի-Փամբակի, Էջմիածնի, Զանգեզուրի գավկոմներին և Ալավերդու ու Ղափանի շրջկոմներին կից կազմակերպվում են մրցությունը նախապատրաստող և անցկացնող հանձնաժողովներ, իսկ արտադրական ԼԿԵՄ կազմակերպություններին կից՝ նախաձեռնող խմբեր և պատասխանատու կազմակերպիչներ[4]։ Բանվոր երիտասարդության ժողովներում գործարանային, շրջանային, բաղաքային արտադրական կոնֆերանսներում լսվում են զեկուցումներ արտադրանքի ինքնարժեքի իջեցման, արտադրողականության բարձրացման, սոցիալիստական մրցության էության մասին։

Հետևելով Լենինգրադի «Կրասնի վիբորժեց» գործարանի երիտասարդության օրինակին, Երևանի Կարբիդի գործարանի կոմերիտական կազմակերպու-

---

[1] Политический и трудовой подъём рабочего класса СССР (1928—29), док. № 123, стр. 208—210.

[2] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ 48, գ. 6, թ. 28, 1929։

[3] Տե՛ս «Ավանգարդ» 1929, փետրվար 1, № 9.

[4] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 10, գ. 227, թ. 23։

թյունը ստեղծում է կարբիդագործների կոմերիտական բրիգադա, որը հասնում է բարձր ցուցանիշների և օրինակ ծառայում մյուս բանվորների համար։ 1928/29 տնտեսական տարվա առաջին կիսամյակում գործարանում արտադրվեց պլանով նախատեսվածից 22 տոկոսով ավելի կարբիդ, ըստ որում ինքնարժեքը իջեցվեց 27 տոկոսով։ Վարչատնտեսական ծախսերը կրճատվում են 19 տոկոսով։ Կազմակերպվում են կոմերիտական 3 հսկիչ խմբեր, որոնք ստուգում են արտադրության կազմակերպումը և սոցմրցության ընթացքը[1]։

Սոցիալիստական մրցման ծավալմանը նվիրված Երևան քաղաքի բանվորների և ծառայողների կոնֆերանսը ապրիլի 25-ին մրցման է հրավիրում ռեսպուբլիկայի բոլոր արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվներին։

Նման կոչով հանդես են գալիս նաև Երևան քաղաքի արտադրական ձեռնարկությունների բանվոր երիտասարդության կոնֆերանսի մասնակիցները։ Ընդունելով Երևանցիների մրցահրավերը, Լենինականի արտադրական ձեռնարկությունների առաջավորների կոնֆերանսի մասնակիցների հանձնարարությամբ, պարիտայի և կոմերիտմիության Լենինականի գավառային կոմիտեները գրում են. «Տեքստիլում, Մեխանիկական գործարանում և երկաթգծում կազմակերպված կոմերիտական ցեխերը 5 օրվա ընթացքում բարձրացրին աշխատանքի արտադրողականությունը 10 տոկոսով։ Համառ շարունակում ենք կիրառել պարտիայի դիրեկտիվը։ Ընդունում ենք Ձեր մրցահրավերը և սպասում կոնկրետ պատասխանի՝ աշխատանքի արտադրողականության բարձրացման գործում»[2]։

Ապրիլի 25-ին սոցիալիստական մրցության պայմանագիր է կնքվում Երևանի Մեխանիկական և Արարատ գործարանների երիտասարդ բանվորների միջև[3]։

Զափանի արտադրական բոլոր ձեռնարկություններում անց են կացվում բանվոր երիտասարդության ժողովներ՝ պրոֆմիության և վարչության ներկայացուցիչների մասնակցությամբ, որտեղ լսվում են զեկուցումներ սոցիալիստական մրցության մասին, պարզաբանվում Վ. Ի. Լենինի «Ինչպես կազմակերպել մրցությունը» հոդվածը և ՀամԼԿԵՄ Կենտկոմի ու ՀԼԿԵՄ Կենտկոմի կոչերը՝ սոցիալիստական մրցությունը ծավալելու վերաբերյալ։ Սոցմրցության գաղափարը կոմերիտականներին և երիտասարդներին հասցնելուց հետո լենինյան հանքերում կազմակերպվում են կոմերիտական երկու օրինակելի ցեխեր՝ հորատողների և տեսակավորողների։ Կոմերիտական ցեխ է ստեղծվում Շահումյանի անվան հանքում։ Կոմերիտական ցեխերը իրենց աշխատանքները սկսում են 1929 թ. մայիսի 1-ից[4]։

Ապրիլի 15-ից սոցմրցության մեջ են մտնում նաև Ալավերդու և Շամլուղի պղնձահանքերի և գործարանների կոմերիտականները։ Շամլուղում կազմակերպվում է ամրացնողների, հանքաքար լվացողների, տեսակավորողների կոմերիտական 10 արտել, Ալավերդում՝ 17 արտել։ Բոլոր հանքերում ստեղծվում

---

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, գ. 291։

[2] «Ավանգարդ», 1929, ապրիլի 26, № 21։

[3] Նույն տեղում։

[4] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, գործ 85, թ. 92, 1929։

են կոմերիտական հսկիչ կետեր, որոնք հետևում են աշխատանքի արտադրողականության բարձրացման և ինքնարժեքի իջեցման աշխատանքներին[1]։

Ինչպես ամբողջ Սովետական Միությունում, այնպես էլ Հայաստանում, սկսվում է աշխատավոր մասսաների արտադրական հզոր վերելք, որը զուգադիպում է Հայաստանի լենինյան կոմերիտմիության տասնամյակին։ Անցած 10 տարիների ընթացքում մարտական «Սպարտակի» փոքրաթիվ խմբակները արդեն վեր էին ածվել կոմերիտական մասսայական կազմակերպության, որը Կոմպարտիայի ղեկավարությամբ մեծ աշխատանք էր կատարում պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման, սոցիալիզմի տնտեսական հիմքի կառուցման համար մղվող պայքարում։ 1929 թ. ապրիլի 1-ի տվյալներով Հայաստանում գոյություն ուներ 973 կոմերիտական սկզբնական կազմակերպություն, որն իր շարքերում միավորում էր 24680 կոմերիտական։ Կոմերիտականներից 9466-ը բանվորներ և բատրակներ էին, 13229-ը՝ գյուղացիներ։ Կոմերիտական կազմակերպությունների մեջ կային պարտիայի 1833 անդամ-թեկնածուներ։ ՀԿՊ Կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանը «Խորհրդային Հայաստան» թերթում 1929 թ. ապրիլի 20-ին հրապարակած «Հաղթական տասնամյակը և կոմսոմոլի հիմնական անելիքները» հոդվածում գրում է, որ Հայաստանի կոմերիտմիությունը «...մեր երկրում կառուցվող սոցիալիզմի հիմնական հենարաններից և անսասան սյուներից մեկն է կազմում։ Նա պայքարի և շինարարության առաջին շարքերում է. նորակառույց և կառուցվող մեր արդյունաբերության մեջ, գյուղական աշխատանքների աստիճանում, սոցիալիզմի գյուղական առաջավոր մարտկոցներում՝ կոլեկտիվ տնտեսության մեջ. դպրոցում և կուլտուրական ռևոլյուցիայի բոլոր բնագավառներում, ռևոլյուցիոն Կարմիր Բանակի ամրակուռ շարքերում, ամենուրեք և անընդհատ լենինյան մեր կոմերիտմիությունը նոանդագին առաջ է տանում իր աշխատանքները»[3]։

Հայաստանի կոմերիտմիության տասնամյակի առթիվ ռեսպուբլիկայի կոմերիտականներին և ողջ աշխատավոր երիտասարդներին կոչով և նամակով դիմում են ՀԿՊ և ՀԼԿԵՄ Կենտրոնական կոմիտեները[4]։ Կոչում և նամակում նշված են այն կոնկրետ խնդիրները, որոնց վրա պետք է բևեռեին իրենց ուշադրությունը կոմերիտական կազմակերպությունները։ ՀԿՊ Կենտկոմը վստահություն է հայտնում, որ «կոմերիտմիությունը ավելի մեծ չափերով կաշխատի ներգրավել աշխատավոր երիտասարդությանը Սոցիալիստական շինարարության գործին և կդաստիարակի իր շարքերում իսկական ինտերնացիոնալիստների, լենինյան բոլշևիկների մի ամրակուռ բանակ»[5]։

Հայաստանի լենինյան կոմերիտմիությունը, ողջ աշխատավոր երիտասարդությունը պարտիայի և կոմերիտմիության մարտական կոչերը դարձնում են իրենց պայքարի հետագա ծրագիրը։

---

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, գ. 203, թ. 2—6։

[2] Комсомол Закавказья в цифрах, Тифлис, 1931, стр., 5, 16, 30.

[3] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1929, ապրիլի 20, № 91։

[4] Տե՛ս ա) «Ավանգարդ», № 28, 1929, ապրիլի 20 («ՀԼԿԵՄ Կենտկոմի նամակը ուղղված բոլոր կոմերիտականներին և երիտասարդներին»), բ) «Խորհրդային Հայաստան», 1929 ապրիլի 20, № 91 (Հայկոմկուսի Կենտկոմի կոչը ուղղված Հայաստանի լենինյան կոմերիտմիության բոլոր անդամներին)։

[5] Նույն տեղում։

Ինչպես ՀամԼԿԵՄ, այնպես էլ նրա բաղկացուցիչ մասը կազմող ՀԼԿԵՄ աշխատանքները նոր թափով են ծավալվում այն բանից հետո, երբ պարտիայի 16-րդ կոնֆերենցիան, ընդունելով հնգամյա պլանը, հավանություն է տալիս և ամրողջությամբ պաշտպանում «Լենինյան կոմերիտմիության և մամուլի նախաձեռնությամբ ծավալված սոցիալիստական մրցությունը»[1]։

Սոցիալիստական մրցությունը սոցիալիզմի համար մղվող պայքարում բանվոր դասակարգի ձեռքին վեր է ածվում հզոր զենք։ Ստեղծագործական էնտուզիազմով էին համակված աշխատավորական միլիոնավոր մասսաները, զարթոնք էին ապրում տաղանդները, «որոնք ժողովրդի մեջ անսպառ աղբյուր են և որոնց կապիտալիզմը ճմլել, ճնշել, խեղդել է հազարներով ու միլիոններով»[2]։

Հայաստանի լենինյան կոմերիտմիության 6-րդ համագումարը (1929 թ. մայիսի 17—23), անվերապահորեն միանալով պարտիայի 16-րդ կոնֆերենցիայի որոշումներին, ռեսպուբլիկայի կոմերիտականների անունից Կոմունիստական պարտիային խոստանում է մոբիլիզացնել ողջ աշխատավոր երիտասարդությանը, լարել բոլոր ուժերը, երիտասարդության եռանդն ու էներգիան կյանքում անշեղորեն կիրառելու պարտիայի մարտական առաջադրանքները[3]։

Պարտիայի ձեռք առած մի շարք կտրուկ միջոցառումների շնորհիվ վերակառուցվում է նաև պրոֆմիությունների աշխատանքը։ Պրոֆկազմակերպությունները սկսում են ավելի մոտիկից զբաղվել արտադրության կազմակերպման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, մրցության ծավալման հարցերով։ ՀԼԿԵՄ Կենտկոմը և ՀԱՄԽ-ը կոչով դիմում են ռեսպուբլիկայի բոլոր կոմերիտական և պրոֆմիութենական կազմակերպություններին՝ պրոֆմիության և կոմերիտմիության համատեղ աշխատանքի մասին[4]։

Սոցիալիստական մրցությունը կոմերիտական շարժումից վեր է ածվում ընդհանուր բանվորական շարժման, դասակարգի մրցության, որի ընթացքում կոմերիտմիությունը անշեղորեն իրականացնում է Վ. Ի. Լենինի այն պատգամը, որ «Կոմունիստական երիտասարդական միությունը պետք է լինի հարվածային խումբ, որն ամեն մի գործում ցույց է տալիս իր օգնությունը, հանդես է բերում իր նախաձեռնությունը, ձեռներեցությունը»[5]։

Հայաստանի արտադրական ձեռնարկություններում և շինարարական օբյեկտներում կազմակերպվում են մեկ հարվածային գործարան, 4 հարվածային ցեխ, 59 հարվածային բրիգադա, որոնք ընդգրկում են 3658 բանվորներ։ Հարվածայիններից 290-ը կոմունիստներ էին, մնացածը կոմերիտականներ և երիտասարդներ[6]։ Առաջնության դրոշը գանվում էր երիտասարդ բանվորների ձեռքին, որոնք կոմունիստների և կոմերիտականների ղեկավարությամբ հանդիսանում էին բրիգադաների շարժումը ամրապնդող ուժ, արտադրական պլան-

---

[1] ՍՄԿՊ-Ն... բանաձևերում և որոշումներում, մաս 2-րդ, էջ 181։

[2] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 26, էջ 494։

[3] Տե՛ս Հայաստանի ԼԿԵՄ 6-րդ համագումարի բանաձևերն ու որոշումները, Երևան, 1929։

[4] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. [illegible], գ. 30, թ. 3—8, 1929։

[5] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 363։

[6] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, գ. 206, թ. 35։

ների կատարման և գերակատարման նախամարտիկներ։ Մրցությունը և հարվածայնությունը դարձան վճռական պայման տնտեսական ճեղքվածքների շուտափույթ լիկվիդացման և սոցիալիստական շինարարության տեմպերի արագացման գործում։ Աշխատանքի արտադրողականության բարձրացման, ինքնարժեքի իջեցման և սոցիալիստական մրցության ծավալման գործում մեծ աշխատանք կատարվեց Լենինականի Մայիսյան ապստամբության անվան Տեքստիլ կոմբինատում, որտեղ աշխատող մոտ 3000 բանվորների 60 տոկոսը կոմերիտականներ էին, 85 տոկոսը երիտասարդներ։ Կոմբինատում աշխատում էին 50 կոմերիտական վարպետներ և ենթավարպետներ։ Ստեղծված էր 23 սկզբնական կոմերիտական կազմակերպություն[1]։ Կոմերիտական կազմակերպությունը կարևոր դեր է կատարում հասարակական սեփականության պահպանման և միջոցների խնայողության գործում։ Կոմերիտականները բարձր գիտակցականությամբ և պատասխանատվությամբ են վերաբերվում մեքենաներին, սարքավորմանը, խնայողաբար են ծախսում հումքը, նյութերը, էլեկտրաէներգիան։ ԼԿԵՄ կազմակերպության որոշմամբ մանվածքային ֆաբրիկայում կազմակերպվում է կոմերիտական հատուկ ցեխ՝ կոմերիտական վարպետ, ՀԼԿԵՄ Կենտկոմի անդամ Սարգիս Ղոզարյանի ղեկավարությամբ։ Ցեխի 50 կոմերիտականներ հանձն են առնում աշխատելու հնացած, գործածությունից հանված 13 մեքենաների վրա և ցեխի վարիչի մոցրած ռացիոնալիզատորական առաջարկության շնորհիվ կարճ ժամանակում զգալի չափով կրճատում են խոտան արտադրանքը, 17,5 տոկոսով բարձրացնում աշխատանքի արտադրողականությունը։ Ռացիոնալիզացիայի շնորհիվ կոմբինատը տնտեսում է 39350 ռուբլի։ Բանվորի միջին արտադրանքը մեկ ամսվա ընթացքում 237 կգ. մանվածքից բարձրանում է 335 կգ.-ի, դպրոցականների աշխատանքային պարապուրդների ժամերի քանակը 3848-ից իջնում է 304-ի։ Այս նախնական հաջողություններից հետո կոմերիտական ցեխը մրցման է հրավիրում Գործվածքային և Տրիկոտաժի ֆաբրիկաների կոմերիտական կազմակերպություններին, որտեղ ևս ստեղծվում են կոմերիտական ցեխեր։ Միաժամանակ ստեղծվում է 7 հարվածային բրիգադա՝ 200 կոմերիտականներով[2]։ Այս բոլորի շնորհիվ 1928/29 տնտեսական տարում, նախորդ տարվա համեմատությամբ, կոմբինատի համախառն արտադրանքն աճում է 98 տոկոսով, մանվածքը՝ 124 տոկոսով։ Մեկ բանվորի աշխատանքի արտադրողականությունը բարձրանում է Գործվածքային ֆաբրիկայում՝ 23,3 տոկոսով, Մանարանի ֆաբրիկայում՝ 42,4 տոկոսով, Տրիկոտաժի ֆաբրիկայում՝ 59 տոկոսով։ Հայտնի է, որ բոլոր ձեռնարկություններում արտադրանքի ինքնարժեքը իջնում է 12 տոկոսով, պլանով նախատեսված 6,8 տոկոսի փոխարեն[3]։

Արտադրական բարձր վերելք են ապրում նաև ռեսպուբլիկայի արտադրական մյուս ձեռնարկությունները։ Լայնորեն ծավալված մրցության շնորհիվ կաշվի արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունը բարձրանում է մարտ ամսին 31,3 տոկոսով, ապրիլին՝ 36,6, մայիսին՝ 58,6, հու-

---

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, գ. 30, թ. 20։

[2] Նույն տեղում, գործ 236, թ. 54-57։

[3] Տե՛ս «Հայկոմկուսի (բ) Կենտկոմի նամակը Լենինականի գավկոմին, տեքստիլ գործարանի կուսբջիջներին, տեքստիլի կազմակերպության բոլոր անդամներին» Երևան, 1929, էջ 3։

նիսին՝ 75 տոկոսով։ Երևանի Մեխանիկական գործարանում աշխատանքի արտադրողականությունը բարձրանում է 25, ինքնարժեքը իջնում՝ 7 տոկոսով։

Եթե մինչև սոցիալիստական մրցությունը մեկ ամսվա ընթացքում Ղափանի հանքերում հորատողները փորում էին 12—15 մետր, ապա սոցմրցումից հետո այն հասնում է 15—20 մետրի, դրա հետ միասին հորատման յուրաքանչյուր մետրի ինքնարժեքը իջեցվում է 35 ռուբլով։ Վագոնավարները 60—70 վագոն հանքաքարի փոխարեն դուրս են բերում 110 վագոն հանքաքար։ Դինամիտի խնայողությունը հասնում է 10 տոկոսի։ Տեսակավորման ցանցի վրա 8 բանվորի փոխարեն աշխատում է 4 բանվոր, տալով նույն քանակի արտադրանք[1]։

Շամլուղի հանքերում աշխատող 10 կոմերիտական արտելներում (աշխատում էին 100 կոմերիտականներ). արտադրանքի ինքնարժեքն իջնում է ապրիլ ամսին՝ 21,7, մայիսին՝ 23,9, հունիսին՝ 26,3, հուլիսին՝ 32,8 տոկոսով[2]։

«Կույր» անվանված հանքը, որը փլվել էր ջրի հոսանքի ներխուժումից և լցվել գազերով, նախատեսված էր բացել 4 ամսում։ Կոմերիտական կազմակերպությունը իր վրա վերցրեց հանքի մաքրման և կանոնավորման գործը և սոցմրցման շնորհիվ այն բացվեց մեկ ու կես ամսվա ընթացքում։ Հանքը վերանվանվեց «Մայիսի 1-ի» անվան և դարձավ ամենաառաջավոր հանքերից մեկը[3]։

Ալավերդու կոմբինատում մեկ տարվա ընթացքում պղնձարդյունաբերության արտադրանքը ավելացավ 43 տոկոսով, արտադրողականությունը բարձրացավ 36,4, իսկ Զանգեզուրի կոմբինատում՝ 29,8 տոկոսով։ Արտադրանքի ինքնարժեքը իջավ 17 տոկոսով[5]։ Մեկ տարվա ընթացքում արտադրվեց 780 տոննայով ավելի պղինձ, քան 1927/28 տնտեսական տարում։

Մեծ նվաճումներ են ձեռք բերվում Լենինականի շոգեքարշային դեպոյում, վագոնային պարկում, Անի-պեմզայում և ռեսպուբլիկայի արտադրական մյուս ձեռնարկություններում։

Երկրի սոցիալիստական ինդուստրացման պարտիայի քաղաքականությունը դարձել էր բանվոր դասակարգի, նրա երիտասարդ սերնդի հարազատ գործը։ Բանվորները, ծառայողները որոնում էին աշխատանքի կազմակերպման նորանոր ձևեր ու միջոցներ, նոր աղբյուրներ՝ արտադրությունը ավելի կատարելագործելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, ինդուստրացումը արագացնելու համար։ Այդպիսի միջոցներից մեկը հանդիսացավ բանվոր դասակարգի նախաձեռնությամբ ծնված «ինդուստրացման օրվա» կազմակերպումը։ Մոսկվայի և Լենինգրադի օրինակով այդպիսի օրեր անցկացվեցին ամբողջ Սովետական Միության մեջ։ Անդրկովկասի աշխատավորության նախաձեռնությամբ «ինդուստրացման օրը» նշանակվեց սեպտեմբերի 20-ին՝ կիրակի օրը։ Այդ օրը համընկավ Բաքվի 26 կոմիսարների գազանային սպանության 11-րդ տարեդարձին, որը «ինդուստրացման օրվան» տվեց առանձնահատուկ նշանակություն։ «Ինդուստրացման օրը» հաջող և կազմակերպված անցկացնե-

[1] «Երիտասարդ բոլշևիկ», 1929, № 5—6, էջ 31։

[2] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, գ. 89, թ. 91։

[3] Նույն տեղում, ֆ. 48, գ. 203, թ. 2—6։

[4] «Ավանգարդ», օգոստոս, 1929։

[5] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, գ. 72, թ. 29։

յու գործում մեծ դեր խաղացին ԼԿԵՄ կազմակերպությունները։ Նրանք երիտասարդ և հասակավոր բանվորների մեջ բացատրական աշխատանք ծավալեցին պարտիայի ինդուստրացման քաղաքականության մասին. պարտկազմակերպությունների ղեկավարությամբ ապահովեցին, որպեսզի սեպտեմբերի 20-ին լրիվ բեռնվածությամբ աշխատեն բոլոր ձեռնարկությունները, մեքենաները, դազդահները։ ՀԿԵՄ Կենտկոմի կոչով այդ օրը բոլոր կոմերիտականները դուրս եկան աշխատանքի՝ ունենալով «ինդուստրացման օրը» դա 26 կոմունարների հիշատակի լավագույն հավերժացումն է», «Հավերժացնենք 26 կոմունարների հիշատակը, ծավալենք սոցիալիզմի շինարարության թափը», «ինդուստրացման օրով հարվածենք դասակարգային թշնամուն», «ոչ մի կոմերիտական և երիտասարդ առանց ինդուստրացման համար աշխատելու» լոզունգները։

«Ինդուստրացման օրը» ցույց տվեց աշխատանքի կազմակերպվածության և հերոսության նորանոր օրինակներ։ Աշխատանքի էին դուրս եկել բոլոր արտադրական ձեռնարկությունների բանվորներն ու ծառայողները։ Շատ տեղերում աշխատում էին նաև արձակուրդում գտնվող բանվորները։ Ինդուստրացման օրվան իրենց լուման մուցրին ուսանողները, ինտելիգենցիան, գյուղական երիտասարդությունը։ Գյուղում ինդուստրացման օրը անցկացվեց գյուղի սոցիալիստական-վերակառուցման տեմպի ուժեղացման և գյուղի ու քաղաքի արտադրական կապերի ամրապնդման նշանարանի տակ։ Այդ օրվա աշխատանքից առաջացած ամբողջ գումարը նվիրվեց «ինդուստրացման ֆոնդին»։

Կոմունիստական պարտիայի ձեռք առած մի շարք միջոցառումների շնորհիվ, սովետական ժողովրդի հերոսական ջանքերով առաջին հնգամյակի առաջին տարվա ընթացքում, մեր երկիրը հասավ հսկայական առաջընթացի։ Արդյունաբերության արտադրանքի բացարձակ աճը մեկ տարվա ընթացքում ՍՍՈՄ-ում կազմեց 4,1 միլիարդ ռուբլի, արդյունաբերության աճի տեմպը՝ 25,9 տոկոս։ Ծանր արդյունաբերությունը տվեց 32 տոկոս աճ։

Մեծ նվաճումներ ձեռք բերվեցին Սովետական Հայաստանում, որտեղ հիմնական ներդրումները կազմեցին 40 միլիոն ռուբլի (41 տոկոսը արդյունաբերության մեջ)։ Արդյունաբերական արտադրանքը աճեց 53,6 տոկոսով՝ կազմելով ողջ արտադրանքի 34 տոկոսը, ինքնարժեքը իջավ 13 տոկոսով (նախատեսված 9-ի փոխարեն), աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ 30 տոկոսով[2]։ Էլեկտրաէներգիայի արտադրանքը ավելացավ 60 տոկոսով, պղնձահանքի հանույթը՝ 28,1 տոկոսով, ձուլումը՝ 20,8 տոկոսով, քիմիական արդյունաբերության արտադրանքը՝ 69,3 տոկոսով, մանվածքային արտադրանքը՝ 226,5 տոկոսով[3]։ Առաջին հնգամյակի առաջին տարվա ընթացքում հաջողությամբ աշխատում էին Երևանի և Լենինականի էլեկտրակայանները, շարունակվում էր Զորագեսի հիդրոկայանի շինարարությունը, հիմք դրվեց Քանաքեռի և տեղական նշանակություն ունեցող մի քանի էլեկտրակայանների շինարարությանը։ Սկսեց զարգանալ քիմիական արդյունաբերությունը։ Դրվեց ցիանամիդի, կոլչեդանի, պղնձարջասպի, ծծմբաթթվի գործարանների հիմքը։ Լայն թափ ստացավ շինանյութերի արտադրությունը։ Սկսվեց Դավալուի ցեմենտ-

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. [illegible], գ. 126, թ. 65։

[2] Տե՛ս Ա. Խաչիկյան. «Մեծ բեկման շրջանը և մեր խնդիրները» (Հ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը 7-րդ համագումարին), Երևան, 1930, էջ 16—18, 26—27։

[3] Տե՛ս ՀՍԽՀ աշխատանքը և արդյունաբերությունը 1926—1929 թթ., էջ 226։

տի գործարանի շինարարությունը, ընդարձակվեց Լենինականի Տեքստիլ կոմբինատը, կառուցվեցին Արթիկի, Պեմզայի երկաթգծերը՝ 38 կիլոմետր երկարությամբ։ Սկսվեց 40 կմ. երկարությամբ Ղափան-Մինջևան գծի կառուցումը։

Աճեց արդյունաբերության և շինարարության մեջ աշխատող բանվորների թիվը, 1929 թ. վերջին հասնելով 20406-ի, և տալով աճ՝ շինարարության մեջ 28 տոկոս, ցենզային արդյունաբերության մեջ 16,3 տոկոս[1]։ Այս բոլորը խթան հանդիսացան գործազրկության իսպառ վերացման համար։ Գործազուրկների համար կազմակերպվում են շինարարական, մտավոր աշխատանքի, ինդուստրիալ խմբակներ, որտեղ սովորում են 2870 հոգի և անցնում համապատասխան աշխատանքի[2]։ Բարելավվեցին բանվորների կուլտուր-կենցաղային պայմանները, միջին աշխատավարձը աճեց 15 տոկոսով։ Սանատորիաներում և հանգստյան տներում բուժվեցին և հանգստացան 2640 հոգի, որից 1755-ը բանվորներ[3]։ Յոթժամյա բանվորական օրվա անցան Երևանի Կարբիդի և Մեխանիկական գործարանները՝ 104 բանվորներով, իսկ 1929/30 տնտեսական տարում 5 գործարան՝ 3732 բանվորներով[4]։ Անընդհատ արտադրական շաբաթի անցան ռեսպուբլիկայի բանվորների ընդհանուր թվի 90,8 տոկոսը, 13 գործարաններից՝ 9-ը[5]։

Չնայած այս լուրջ առաջընթացին, Հայաստանի արդյունաբերական որոշ ձեռնարկություններ հնգամյակի առաջին տարին փակեցին մեծ ճեղքվածքներով, պլանների թերակատարումով։

Հայաստանի ամբողջ արդյունաբերությունը տարեկան պլանը կատարեց 92,4 տոկոսով, Հայտեքստիլը պլանը կատարեց միայն 60 տոկոսով, պղնձարդյունաբերությունը՝ 87 տոկոսով։ Այս խնդիրների վրա բևեռեց Հայաստանի կոմունիստների և ողջ աշխատավորության ուշադրությունը ՀԿ(բ)Պ Կենտկոմը՝ հատուկ նամակներով դիմելով Լենինականի, Ալավերդու, Ղափանի պարտկազմակերպություններին[6]։ Պարտիայի մոբիլիզացնող և ոգեշնչող ուժը տվեց իր պտուղները։

Երկրի ինդուստրացման գործում առաջին խոշոր հաջողությունները պայմաններ ստեղծեցին ամբողջ ժողովրդական տնտեսության, այդ թվում և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը հաջող իրականացնելու համար։

1929 թ. հունվարից սկսած մեծ աշխուժություն է նկատվում նաև Հայաստանի գյուղական կոմերիտական կազմակերպություններում։ Սկսվում է մասսայական արշավ գյուղի կոլեկտիվացման և բերքատվության բարձրացման համար։ 1929 թ. հունվարին ՀամԼԿԵՄ Կենտկոմը, ապա ՀԼԿԵՄ Կենտկոմը կոչով դիմում են կոմերիտականներին և երիտասարդներին՝ դաշտերի բերքատվության բարձրացման, գյուղական անհատական տնտեսությունների կոոպե-

1 Ա. Խանջյան. «Մեծ բեկման շրջանը և մեր խնդիրները», էջ 40—41։

2 ՀՍՍՀ կառավարության հաշվետվության նյութեր (1928 – 1929, 1929—1930). 1931, Երևան, էջ 167։

3 Նույն տեղում, էջ 172։

4 Նույն տեղում, էջ 168 – 169։

5 Նույն տեղում, էջ 27 – 28։

6 Տե՛ս ա) Հայկոմկուսի (բ) Կենտկոմի նամակը Լենինականի գավկոմին, տեքստիլ գործարանի կուսբջիջներին, տեքստիլի կազմակերպության բոլոր անդամներին, Երևան, 1929։

բ) Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի նամակը կուսակցության Զանգեզուրի և Լոռու գավկոմներին, Ալավերդու և Ղափանի շրջկոմներին, Հայպղինձ տրեստի վարչության կոմունիստներին, պրոֆկազմակերպության ֆրակցիաներին, բջիջներին, կուսակցության Ղափանի Ալավերդու շրջանների բոլոր անդամներին, Երևան, 1930։

ռացման և կոլեկտիվացման աշխատանքներին օգնելու համար բերքարշավ կազմակերպելու մասին։ Բերքարշավի հիմնական նպատակն էր՝ քաղաքի և գյուղի կոմերիտական ջիջներին ոտքի հանել աշխատանքի նոր ձևերի կիրառմանն օգնելու համար. է՛լ ավելի զարկ տալ գյուղատնտեսության զարգացման օգտավետ ձևերին. ընդարձակել ցանքատարածությունները, ժամանակին զտել սերմացուն, կանոնավորել տրակտորների և գյուղատնտեսական այլ մեքենաների օգտագործումը, ավելի լայնացնել կոլտնտեսությունների ցանցը՝ նրանցում ընդգրկելով կոմերիտականներին։

Գյուղական կոմերիտականները Հայաստանում ներկայացնում էին մեծ ուժ։ Գյուղում կար մոտ 750 կոմերիտական սկզբնական կազմակերպություն, որը իր մեջ միավորում էր ռեսպուբլիկայի բոլոր կոմերիտականների 72,3 տոկոսը[1] (բատրակների հետ միասին)։

Կազմակերպվում են բերքարշավի կենտրոնական և գավառային շտաբներ, իսկ շրջաններում գյուղատնտեսի մասնակցությամբ՝ եռյակներ։ Հրավիրվում են ակտիվի խորհրդակցություններ և ջիջների ժողովներ, որտեղ լսվում են դարնանացանի հետ կապված զեկուցումներ, կազմակերպվում են գյուղատնտեսի հետ մերձեցման երեկոներ, քննարկվում գյուղատնտեսի և կոմերիտականների համատեղ աշխատանքը։ Կոմերիտականները դարնանացանին դուրս եկան «ոչ մի ֆունտ սերմ առանց զտման չցանել», «ոչ մի ֆունտ սերմ առանց ցանելու չթողնել» լոզունգներով։ Լոռի-Փամբակի կոմերիտական կազմակերպությունը առաջինը դուրս եկավ բերքարշավի, գնեց «Կոմսոմոլի բերքարշավ» անունով երկու սերմազտիչ և մրցման հրավիրեց մյուս կազմակերպություններին։ Կոմերիտական կազմակերպությունները բերքարշավի ժամանակ մեծ աշխատանք են տանում կոլտնտեսությունների կազմակերպման ու ամրապնդման և նրանցում կոմերիտականներին ու չքավոր երիտասարդներին ընդգրկելու ուղղությամբ։ Միայն կոմերիտականների ուժերով 1929 թ. ստեղծվեց 30 կոլտնտեսություն. 18 փորձադաշտ, 56 կոոպերատիվ ընկերություն[2]։ Զանգեզուրում կոմերիտականները կոլտնտեսություններ ստեղծեցին Տաթևում, Գորիսում, Ալիքենդում։ Ուժեղացվեց և ամրապնդվեց Տեղ գյուղի կոլտնտեսությունը[3]։

Ծավալվեց մրցությունը գյուղի սոցիալիստական վերակառուցման ուղղությամբ։ Մրցությունը հանդիսացավ հիանալի և մեծ ուժ՝ քաղաքի և գյուղի աշխատավորության միջև բարեկամական հարաբերությունների, ընկերական համագործակցության և սոցիալիստական փոխօգնության ամրապնդման գործում։ Նա օգնեց սոցիալիստական քաղաքին՝ ցույց տալու իրական օգնություն կոլտնտեսային շինարարության ճանապարհը բռնած սովետական գյուղին, նպաստեց բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքի ամրապնդմանը, քաղաքի և գյուղի միջև եղած էական տարբերությունների աստիճանաբար վերացմանը։ Ռեսպուբլիկայի քաղաքների արտադրական ձեռնարկությունների կոմերիտական կազմակերպությունները լայն արշավ են սկսում գյուղին ցույց տրվող օգնությունը ուժեղացնելու համար։ Պիրոմականի երկաթուղային կայարանի կոմերիտական կազմակերպությունը գնեց 251 ռ. արժողությամբ մեկ սերմազտիչ մեքենա և դուրս եկավ բերքարշավի՝ զտելով չքա-

[1] Տե՛ս Комсомол Закавказья в цифрах, Тифлис, 1931, стр. 16.

[2] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, գ. 17, թ. 11, 1929։

[3] Նույն տեղում, ֆ. 48, գ. 291, թ. 12։

վոր գյուղացիների սերմացուն՝ Համամլուի շրջանի գյուղերում։ Կիրովականի կայարանի կոմերիտականները մրցման հրավիրեցին Ալավերդու գործարանների, Սանահինի կայարանի, Լենինականի դեպոյի, Զորագէսի և Երևանի արտադրական ձեռնարկությունների կոմերիտական կազմակերպություններին[1]։

Ռեսպուբլիկայում լայն շարժում ծավալվեց գարնանացանի օգտին հատուկ ֆոնդ ստեղծելու համար։ Բանվոր երիտասարդության ուժերով հավաքվեց 9233 ռ.[2]։ Միայն Լենինականում հավաքված գումարով ձեռք բերվեց 10 սերմազտիչ մեքենա, 15 արոր, 8 շարքացան, 10 ձիու փոցխ[3]։ Հրետանային գունդը գավառի կոլտնտեսություններին նվիրեց 10 ձի։ ՀԼԿԵՄ Երևանի գավառային կոնֆերանսի որոշմամբ, գավառի կոմերիտականները ձեռք բերեցին երեք տրակտոր, Ղափանի կոմերիտականները՝ 15 գութան և նվիրեցին գյուղին[4]։ Կոլտնտեսությունների կուլտուրական, արտադրական, կազմակերպական աշխատանքները գլխավորելու համար Երևանի կազմակերպությունից երկու տարով աշխատելու համար գյուղերն ուղարկվեցին 40 կոմերիտականներ, 50 հոգի գյուղերը գործուղվեցին գարնանացանի կոնկրետ աշխատանքներին օժանդակելու համար[5]։

Բանվոր երիտասարդության՝ գյուղին ցույց տրվող օգնությունը ավելի լայն թափ է ստանում սկսած 1929 թ. երկրորդ կեսից, այն բանից հետո, երբ ՀԼԿԵՄ Կենտկոմի պլենումը (օգոստոսի 5—6-ը) լսում է զեկուցումներ սոցմրցման նախնական արդյունքների և բերքարշավի առաջին հաջողությունների մասին[6]։

Դրանից հետո Երևան քաղաքի կոմերիտական ակտիվի ժողովը դիմում է ռեսպուբլիկայի կոմերիտական կազմակերպություններին՝ բոլշևիկյան առաջին գարնանացանին օգնելու համար կոմերիտական տրակտորային շարասյուն կազմակերպելու մասին կոչով։ ՀԼԿԵՄ Կենտկոմը, հավանություն տալով երեվանցիների նախաձեռնությանը, իր հերթին դիմում է Հայաստանի բոլոր կազմակերպություններին՝ հետևելու երևանցիների օրինակին։ Կենտկոմը առաջարկում է կազմակերպել 10 տրակտորից բաղկացած շարասյուն՝ 25 հազար ռուբլի արժողությամբ[7]։

Կենտկոմի որոշմամբ սեպտեմբերի 5-ից անց է կացվում Համահայաստանյան շաբաթօրյակ՝ գյուղի նկատմամբ շեֆական աշխատանքները ուժեղացնելու նպատակով։ Մինչև տարվա վերջը տրակտորային շարասյան ֆոնդի օգտին հավաքվում է 7902 ռ.։ Ռեսպուբլիկայի պիոներական կազմակերպությունը գարնանացանին նվիրում է «Պիոներ» անունով մեկ տրակտոր[8]։

Սոցիալիստական մրցությունը ծավալվում է նաև ռեսպուբլիկայի գյուղերում։ Շրջանների և գյուղերի կոմերիտական կազմակերպությունները հանդես եկան կոլեկտիվացումը ծավալելու, ցանքատարածությունները ընդարձակելու, բերքատվությունը բարձրացնելու սոցմրցման հրավերներով։ Ստեփանավանի

[1] «Ավանգարդ», 1929, մարտի 29, № 24։

[2] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 40, գ. 43 թ. 17։

[3] Նույն տեղում, ֆ. 48, գ. 291, թ. 12։

[4] Նույն տեղում։

[5] Նույն տեղում։

[6] Նույն տեղում, ֆ. 48, գ. 4, թ. 8, 1930։

[7] Նույն տեղում, ֆ. 48, գ. 3, թ. 15, 1930։

[8] Նույն տեղում, ֆ. 48, գ. 39, թ. 49, 1930։

կոմերիտական կազմակերպությունը մրցման մեջ մտավ Դսեղ և Համամլու գյուղերի կոմերիտական կազմակերպությունների հետ, Ղամարլուի շրջանի Խարղալա (Անաստասավան) գյուղի կոմերիտական կազմակերպությունը Բուրաստանի կազմակերպության հետ։ Սոցմրցման պայմանագիր կնքեցին Իջևանի, Սև քարի, Ուզունթալայի կոմերիտական կազմակերպությունները։

Գյուղական կոմերիտականները մեծ աշխատանք տարան հացամթերումների կամպանիային օգնելու համար, որի շնորհիվ հավաքվեց ավելի շատ հացահատիկ, քան նախատեսված էր պլանով։ Լենինականի գավառի Քեշիշքենդ գյուղում հավաքվեց 1850 փութ հացահատիկ 1000 փթի փոխարեն, Ջառջառիս, Միրաք գյուղերում՝ պլանով նախատեսվածից երկու անգամ ավելի, իսկ Հաջիխալիլ գյուղում՝ 700 փթով ավելի։ Մեծ հաջողություններ ձեռք բերվեցին ռեսպուբլիկայի մյուս գավառների գյուղերում[1]։

15 հազար կոմերիտականներ 10 օրով մոբիլիզացվում են հեղեղումների դեմ կռվելու և առուներն ու ջրանցքները մաքրելու համար։ Հանկարծակի հեղեղումների դեմ պայքարելու նպատակով կազմակերպվում են կոմերիտական հարվածային բրիգադներ։

Գյուղատնտեսական տեխնիկումից 75 կոմերիտականներ ուղարկվում են գյուղեր՝ հեղեղումների դեմ պայքարի գործը կազմակերպելու համար։

Ավելի աշխուժացավ գյուղ ուղարկվող բանվորական և կուլտուրական բրիգադների շարժումը։ 1929 թ. վերջերին կազմակերպվեցին 625 այդպիսի բրիգադներ՝ 5048 կոմերիտականներով և ուղարկվեցին գյուղեր[2]։

Պարտիայի և նրա մերձավոր օգնական կոմերիտմիության ամենօրյա աշխատանքի շնորհիվ ամրապնդվում են կոլտնտեսությունները, ստեղծվում նոր կոլեկտիվ տնտեսություններ։ Զքավոր ու միջակ երիտասարդները, ընդօրինակելով պարտիականներին և կոմերիտականներին, մասսայարար մտնում են կոլտնտեսությունների մեջ։ 1929 թ. հունվարին Հայաստանում գոյություն ունեցող 96 կոլտնտեսությունների փոխարեն (612 կոմերիտականներով) հոկտեմբերի 1-ին կոլտնտեսությունների թիվը հասնում է 295-ի։ 1930 թվի դարնանը կոլտնտեսությունների մեջ ընդգրկված էին 12845 կոմերիտականներ[3]։

1929 թ. սկզբներին նախապատրաստվում էր Սովետների ընտրություններ՝ ամբողջ Սովետական Միության մեջ։

Պարտիան ղեպի Սովետների նոր ընտրությունները գնաց լայնորեն պարզած լենինյան դրոշը, հաստատ համոզված, որ իր կիրառած քաղաքականությունը գտնում է բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության լայն աջակցություն։ Հայաստանի բոլոր քաղաքներում, գավառներում և գյուղերում 1929 թ. փետրվարի 1-ից մինչև ապրիլի 6-ը տեղի ունեցան Սովետների ընտրություններ։ Հայաստանի Կոմպարտիան մոբիլիզացրեց ռեսպուբլիկայի բանվորական և գյուղացիական աշխատավորական մասսաներին՝ ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1929 թ. հունվարի 1-ի նամակի[4] կենսագործման շուրջը, որը դարձավ ծրագրային փաստաթուղթ Սովետների ընտրությունների ժամանակ։

---

[1] «Ավանգարդ», 1929, նոյեմբերի 18, № 88։

[2] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, գ. 43, թ. 67, 1930։

[3] Նույն տեղում, ֆ. 48, գ. 48, թ. 65, 1930։

[4] Տե՛ս, Политический и трудовой подъём рабочего класса СССР (1928—29). док. № 191, стр. 159.

Սովետների ընտրություններին ակտիվորեն մասնակցեց Հայաստանի լենինյան կոմերիտմիությունը, որը աշխատավոր երիտասարդության ուշադրությունը կենտրոնացրեց Կոմպարտիայի և Սովետական իշխանության քաղաքականության հիմնական խնդիրների կենսագործման վրա։

Ընտրությունների արդյունքները Հայաստանում ցույց տվեցին, որ զգալի չափով բարձրացել է աշխատավոր երիտասարդության քաղաքական ակտիվությունը, որ նա միահամուռ կերպով համախմբվել է Սովետական կառավարության և Կոմունիստական պարտիայի շուրջը։ Ընտրությունները միաժամանակ ցույց տվեցին բանվորների և աշխատավոր գյուղացիության կուռ դաշինքի ուժեղացումը, և այդ դաշինքում բանվոր դասակարգի ղեկավար դերի ամրապնդումը, պարտիայի ղեկավարության ուժեղացումը սովետական ապարատի աշխատանքներում։ Բարելավվել էր Սովետների պրոլետարական կորիզն ու պարտիական կազմը։

Ընտրությունների ժամանակ մեծ նվաճումներ ձեռք բերեց կոմերիտական կազմակերպությունը։

Քաղաքային և գյուղական Սովետներում ընտրվածների 17,9 տոկոսը (3198 հոգի) մինչև 23 տարեկան հասակի երիտասարդներ էին, 2567-ը կոմերիտականներ։ 384 կոմերիտականներ ընտրվեցին գյուղսովետների նախագահության կազմում, 117 կոմերիտականներ՝ գյուղսովետի նախագահներ. գյուղսովետների վերստուգիչ հանձնաժողովների 831 նախագահներից 539-ը կոմերիտականներ էին[1]։

Սոցիալիստական շինարարության նոր խնդիրները պահանջում էին վճռական շրջադարձ կուլտուրական ռևոլյուցիայի ճակատում, այդ գործում բանվորա-գյուղացիական երիտասարդության լայն խավերի ներգրավում։ Անհրաժեշտ էր արագ կերպով վերջ տալ անգրագիտությանը մեր երկրում։ Այդ կենսական պահանջ էր նաև Սովետական Հայաստանի համար։ Մեր ռեսպուբլիկայում 1928 թ. դեռևս կար 16—35 տարեկան հասակի 170 հազար անգրագետ, որը կազմում էր այդ հասակի բնակչության 80 տոկոսը։ Յուրաքանչյուր 1000 բնակչից 649-ը անգրագետ էր[2]։

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը պայքար ծավալեցին հին հասարակարգի այդ մնացուկի վերացման ուղղությամբ։ Այդ պայքարում պարտիայի մերձավորագույն օգնականը կոմերիտմիությունն էր։ Հայաստանի կոմերիտական կազմակերպությունը մեծ ավանդ մտցրեց ազգարնակչության մեջ համընդհանուր գրագիտության համար մղվող պայքարում։ Ռեսպուբլիկայում «անգրագիտության վերացման գործում նշանակալից բեկում առաջացավ միայն 1928/29 թվականին, շնորհիվ կոմսոմոլի կողմից լայնորեն կազմակերպած կուլտարշավին»[3]։

1928 թ. վերջերին և ապա 1929 թ. ՀԿԵՄ Կենտկոմը անց է կացնում կուլտուրական արշավ հին կենցաղի վնասակար մնացուկների դեմ՝ անկուլտուրականության, անգրագիտության, մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկների լիկվիդացման համար։ Կոմերիտմիության հետ միասին կուլտ-

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, գ. 285, թ. 71—72։

[2] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1928, նոյեմբերի 17, № 241։

[3] Տե՛ս ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր (1928—29, 29—30), Երևան, 1931, էջ 180։

ստրշավի դուրս եկան պրոֆմիութիւնները, կոոպերացիան, լուսավորության օրգանները, սովետական ինտելիգենցիայի լավագույն մասը։ Առաջին կուլտուրական արշավը, որն անցավ «ոչ մի անգրագետ կոմերիտական» լոզունգով, մեծապես նպաստեց անգրագիտության վերացմանը։ Շնորհիվ կոմերիտական մասսայի կուլտարշավին ցուցաբերած հսկայական եռանդի, կազմակերպվեց 1275 լիկկայան, վերացվեց 31892 հոգու անգրագիտությունը և կիսագրագիտությունը։ «Կորչի անգրագիտությունը ընկերության» մեջ ընդգրկվեցին 11500 հոգի[1]։ Միայն Երևանի գավառում բացվեց 115 լիկկայան՝ 2700 ունկնդիրներով[2]։

Շարաթօրյակների միջոցով ստեղծվեց նյութական բազա՝ անգրագիտության վերացման, խմբակների պահպանման և նրանց մեջ ավելի շատ չքավոր գյուղացիներ և բատրակ երիտասարդներ ներգրավելու համար։ Միայն առաջին արշավի ժամանակ այդ նպատակով հավաքվեց 13000 ռուբլի։ Կուլտարշավը իր վրա բևեռեց ամբողջ հասարակայնության ուշադրությունը և իր մեջ ընդգրկեց գյուղի ու քաղաքի լայն մասսաներին։

Բանվոր և գյուղացի երիտասարդությունը մեծ ակտիվություն է ցուցաբերում իր կրթական, կուլտուրական մակարդակի բարձրացման ուղղությամբ։ Կոմունիստական պարտիայի հոգատարությամբ կազմակերպվում են մի շարք դասընթացներ, որտեղ նրանք պատրաստվում են տեխնիկումներ և բուհեր ընդունվելու համար։ Երկու տարվա ընթացքում կազմակերպվում է 123 դասընթաց, որտեղ սովորում են 12162 հոգի[3]։ Պրոֆդպրոցները ընդունվելու համար բացվում է 11 դասընթաց, որտեղ սովորում են 699 բանվոր և բատրակ երիտասարդներ[4]։ Երևանում բացված բանվորական համալսարանում սովորում էր 332 հոգի[5]։ 1928/29 ուս. տարում ռեսպուբլիկայի բուհերում և տեխնիկումներում սովորողներից 786-ը որբեր էին՝ նախկին անապատաններ[6]։ Բոլոր տիպի ուսումնական հաստատություններում սովորողների 60 տոկոսը կոմերիտականներ էին[7]։

Ելնելով այս հաջողություններից, խնդիր դրվեց 1929/30 ուսումնական տարվա ընթացքում վերացնել 62.000 հոգու անգրագիտությունը և կիսագրագիտությունը։ ՀԼԿԵՄ կենտկոմի նախաձեռնությամբ 1929 թ. աշնանը հրավիրված անգրագիտության վերացման առաջին համագումարը որոշեց՝ Հայաստանում կազմակերպել կուլտարշավի ստուգատես՝ անգրագիտության վերացման աշխատանքներին օժանդակելու համար։ ՀԼԿԵՄ կենտկոմը 1929 թ. հոկտեմբերի 10—25-ը հայտարարեց «անգրագիտության վերացման տոն»։ Կոմերիտական ամբողջ մասսան ոտքի է կանգնում կենտկոմի որոշումը կենսագործելու համար։ Կազմակերպվում է 2726 լիկկայան, որտեղ ընդգրկվում են 68,145 անգրագետներ.[8] 7000 հոգի անհատապես կցվում են գրագետ կոմերիտականներին։ 50.000 հոգի ընդգրկվում են «կորչի անգրագիտությունը» ընկերության մեջ։

---

[1] ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր (1928—29, 1929—30), Երևան, 1931, էջ 181։

[2] «Ավանգարդ», 1929, № 20։

[3] ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր (1928—29, 29—30), 1931, էջ 185։

[4] Նույն տեղում։

[5] Նույն աեղում, էջ 186։

[6] «Լենինյան ուղի», 1928, № 11, էջ 32։

[7] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆոնդ 48, գ. 44, թ. 32։

[8] ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր (1928—29, 29—30), էջ 186։

Այս ամենը նախադրյալ հանդիսացավ Հայաստանը վերածելու համատարած դրագիտության ռեսպուբլիկայի։ Բնակչության գրագիտության աճը ունեցավ ոչ միայն հանրակրթական նշանակություն, այլև բարերար ազդեցություն գործեց ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառների, այդ թվում աշխատանքի արտադրողականության բարձրացման, աշխատավորների նյութական բարեկեցության և մասսաների քաղաքական ակտիվության բարձրացման վրա։

Սոցիալիստական շինարարության գործում ակտիվ դեր կատարեցին «Թեթև հեծելազորային» խմբերը, որոնց նշանակությունը գնալով մեծանում էր։ «Թեթև հեծելազորը» ծնվեց որպես մասսաների բոլշևիկյան ինքնաքննադատության իսկական արտահայտություն, որպես սոցիալիստական շինարարության թերությունների և բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարի ճակատում նախաձեռնող, ստեղծագործական շարժում։

«Թեթև հեծելազորի» խմբերը Հայաստանում ստեղծվեցին ՀամԼԿԵՄ 8-րդ համագումարից հետո։ Առաջին խումբը ստեղծվեց «Ավանգարդ»-ի խմբագրությանը կից՝ 1928 թ. հուլիսին։ «Թեթև հեծելազորի» խմբերի աշխատանքները լայն ծավալ ստացան ՀամԿ(բ)Պ ԿՎՀ և ՀամԼԿԵՄ Կենտկոմի 1928 թ. դեկտեմբերի 20-ի «Թեթև հեծելազորի խմբերի մասին» շրջաբերականից հետո[1]։

1929 թ. գարնանը ռեսպուբլիկայում արդեն կար 160 խումբ, որտեղ ընդգրկված էին մոտ 2000 կոմերիտականներ և երիտասարդներ։ Հետագայում աշխատանքներն ավելի են աշխուժանում, ստանալով հասարակական-մասսայական բնույթ։

Ինչպես ամբողջ Սովետական Միության, այնպես էլ Սովետական Հայաստանի համար առաջին հնգամյակի առաջին տարին նշանավորվեց վճռական բեկումով ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի սոցիալիստական վերակառուցման գործում։ Այդ բեկումը ձեռք բերվեց բանվոր դասակարգի միլիոնավոր զանգվածների աշխատանքային հզոր վերելքի և ստեղծագործական նախաձեռնության զարգացման ու ծավալման շնորհիվ։

Սոցիալիստական շինարարության բոլոր ճակատներում կազմակերպելով մեծ բեկումը, կոմունիստական պարտիան ոտքի հանեց ամբողջ սովետական ժողովրդին՝ հնգամյա պլանով նախատեսված մեծ և դժվարին խնդիրների կատարման համար։ Պարտիան ոգեշնչեց և ամենուրեք առաջնորդեց բանվոր դասակարգին և աշխատավոր գյուղացիությանը։ Պարտիայի ղեկավարությամբ անշեղորեն քայլում էր լենինյան կոմերիտմիությունը։

Հնգամյակի առաջին տարում ավելի մեծ աշխուժացում, քաղաքական ակտիվություն և դասակարգային նպատակասլացություն ցուցաբերեց ՀամԼԿԵՄ-ը և նրա մարտական ջոկատ Հայաստանի լենինյան կոմերիտմիությունը։ «Հայաստանի կոմերիտմիությունը կարողացավ ամրանալ, աշխուժացնել աշխատանքը երիտասարդության մեջ,— ասված է ՀԿ(բ)Պ Կենտկոմի՝ 7-րդ համագումարին տված հաշվետու զեկուցման մեջ,— կոմսոմոլի ամենախոշոր նվաճումներից մեկը հաշվետու շրջանում նրա տնտեսական, արտադրական աշխատանքներն են արդյունաբերության մեջ։ Կոմսոմոլիստները հարվածային շարժման առաջամարտիկներն են»[2]։

---

[1] Տե՛ս „КПСС о комсомоле и молодежи" (сборник документов), Москва, 1957, стр. 200.

[2] Ա. Խաչիջյան, *Մեծ բեկման շրջանը և մեր խնդիրները*, Երևան, 1930, էջ 52—53։

Ռեսպուբլիկայում հարվածային գործարանների թիվը հասնում է 25-ի, ցեխերի թիվը՝ 117-ի, բրիգադների թիվը՝ 104-ի։ Այդ հարվածային կոլեկտիվներում ընդգրկված էին 8803 բանվորներ, որոնցից 1400-ը կոմունիստներ էին, 7403-ը՝ կոմերիտականներ և երիտասարդ բանվորներ[1]։

Կոմերիտմիությունը ուժեղացրեց կապը արտամիութենական երիտասարդության հետ, նրան տարավ իր հետևից՝ սոցիալիզմի կառուցման դժվարագույն խնդիրների կենսագործման համար։ Մեկ տարվա ընթացքում Հայաստանի կոմերիտական կազմակերպությունը աճեց 8915 հոգով, սկզբնական կազմակերպությունների թիվը՝ 69-ով։ 1929 թ. դեկտեմբերի 31-ի տվյալներով Հայաստանի արտադրական ձեռնարկություններում, հիմնարկներում, կոլտնտեսություններում, դպրոցներում, տրանսպորտում գոյություն ուներ 1019 սկզբնական կոմերիտական կազմակերպություն, որը միավորում էր 31037 առաջավոր երիտասարդներ։ Կոմերիտականներից 5696-ը բանվորներ էին, 6439-ը՝ բատրակներ, 18864-ը՝ չքավոր և միջակ գյուղացիներ։ Ուժեղացավ պարտիական կորիզը կոմերիտմիության մեջ։ 1763 պարտանդամ-թեկնածուներից մեկ տարվա ընթացքում նրանց թիվը հասավ 2439-ի[2]։ Պիոներական կազմակերպությունը այդ նույն ժամանակ աճեց 32 հազարով և հասավ 62 հազար պատանի լենինյանների։

Կոմերիտմիության ղեկավարությամբ ուժեղացավ երիտասարդության մասնակցությունը տնտեսական շինարարության, արդյունաբերության ռացիոնալիզացիայի, ինքնարժեքի իջեցման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, անհատական չքավոր և միջակ գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման, հանրային ցանքատարածությունների ընդարձակման գործում։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ակտիվ կերպով պայքարելով, երկրի սոցիալիստական ինդուստրացման և գյուղի կոլեկտիվացման համար, կուլտուրական ռևոլյուցիայի համար, բյուրոկրատիզմի դեմ կազմակերպելով հարվածային բրիգադներ, կուլտարշավ, բերքարշավ, «Թեթև հեծելազոր»-ի խմբեր, զարկ տալով սոցիալիստական մրցությանը լենինյան կոմերիտմիությունը նպաստեց պրոլետարիատի դիկտատուրայի, սոցիալիստական ռևոլյուցիայի նվաճումների ամրապնդմանը։

Առաջին հնգամյակի առաջին տարվա ընթացքում ձեռք բերելով աշխատանքային մեծ փորձ, քաղաքականապես ավելի կոփվելով, ՀԼԿԵՄ-ը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ձեռնամուխ եղավ Հնգամյակի հետագա տարիների ավելի դժվարին խնդիրների կենսագործմանը։

---

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալ արխիվ, ֆ. 48, գ. 206, թ. 35։

[2] Տե՛ս „Комсомол Закавказья в цифрах", Тифлис, 1931, стр. 5, 16, 30.